ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի Վանաձոր

Մարզ համայնք

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմն. դպրոցի 6-րդ Գ

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Մ. Արզումանյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) _Դասարանում սովորում են տարվա սկզբում 28 աշակերտներ՝ 18տղա և 10աղջիկ: Ընդհանուր մթնոլորտը ջերմ է: Աշակերտները բանիմաց են, սիրում են սովորել:Բավականին աշխույժ են, բայց ոչ անկարգ:
2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
_Ներկայացնել դպրոցի կարգ ու կանոնը, աշակերտի պարտականությունները և իրավունքները: Հետևել աշակերտների հաճախումներին, պարբերաբար ծնողական ժողովներին հետամուտ լինել աշակերտների ուսումնական որակի բարձրացմանը: Մեծ ուշադրություն դարձնել հայրենասիրական դրսևորումներին, մարդկային որակներին, համագործակցությանը, գեղագիտական, աշխատանքային դաստիարակությանը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն- Անցկացնել զրույցներ Հայ առաքելական եկեղեցու, կրոնի դերի և նշանակության մասին թեմաներով, սերմանել նրանց մեջ բարու դրսևորումները: Անդրադառնալ եկեղեցական տոներին՝Սուրբ Զատիկ,Սուրբ Ծնունդ, ազգային ավանդույթների իմացությանն ու պահպանմանը:Երեխաներին զերծ պահել տարբեր աղանդների ազդեցությունից, բացատրել դրանց վնասակարության մասին: Երեխաների մեջ սերմանել փոխադարձ հարգանք միմյանց, մեծահասակների նկատմամբ: Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների՝ հայրենիքի հանդեպ ունեցած վերաբերմունքին , օրինապաշտ ու ազգասեր, պետականամետ քաղաքացու ձևավորմանը: Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ տարբեր եկեղեցիներ, պատմամշակութային հուշարձաններ՝ բացահայտելու և տերը դառնալու մեր հարստությանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն
Հաճախակի կազմակերպել և մասնակցել գեղարվեստական միջոցառումներին, դիտել դաստիարակչական բնույթի ֆիլմեր, այցելել գեղագիտական կենտրոններ՝ պատկերասրահներ, գրողների տուն-թանգարաններ՝ բարձրացնելու աշակերտների գեղագիտական ճաշակը: Դասղեկի ժամերին խոսել գեղագիտական ճաշակի, էթիկայի կանոնների, գեղեցիկի ընկալման մասին: Հաճախակի դասարանի ձևավորումներ կատարել աշակերտների ջանքերով՝ բացահայտելու ճաշակը և գեղեցիկի հանդեպ ունեցած զգացողությունները:
3.3Ռազմահայրենասիրական դաստիարակություն- Զրույցների միջոցով աշակերտներին ծանոթացնել մեր հայրենիքի դարավոր պատմությանը, այդ պատմության քառուղիներում հայրենասիրությամբ աչքի ընկած անհատների կենսագրական տվյալներին: Աշակերտներին տալ հնարավորություն՝ վերլուծելու անհատների արարքները, դասեր քաղելու նրանց սխրանքներից, կյանքի դասերից: Դիտել ֆիլմեր Արցախյան հերոսամարտի,Հայոց ցեղասպանության մասին, հայ ժողովրդի ծագումնաբանության մասին, անցկացնել սեմինարներ, քննարկումներ, բանավեճեր՝ բացահայտելու 21-րդ դարի սերնդի մտածողությունը: Սերմանել սեր սիրել հայրենիքի հանդեպ սեփական փորձի միջոցով: Կազմակերպել հանդիպումներ Արցախյան 44 օրյա պատերազմի մասնակիցների հետ: Այցելություն կազմակերպել 44օրյա պատերազմի զոհերի պուրակ, Հայրենական մեծ պատերազմին նվիրված հուշակոթող, մաքրել պատմամշակութային հուշարձանների տարածքը: Մասնակցել հայրենասիրական տարբեր մրցույթների՝նվիրված մեր հայրենիքին՝ երաժշտական, նկարչական, ինտելեկտուալ:
3.4Ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտների շրջանում բարձրացնել առողջ ապրելակերպի գաղափարը, զրուցել վատ սովորույթների մասին՝ բացահայտելու արատները: Խրախուսել սպորտային խմբակներ հաճախող աշակերտներին,անմիջական մասնակցություն ունենալ համադպրոցական և համաքաղաքային սպորտային միջոցառումներին: Կազմակերպել զրույց-քննարկումներ `Հեռու մնանք վնասակար սովորություններից թեմայով՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչների մասնակցությամբ: Անցկացնել համակցված դասեր բնագիտության և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ՝ավելի լավ պատկերացում կազմելու սեփական օրգանիզմի դերի և նրա վրա վատ ազդեցությունների մասին:

3.5Աշխատանքային դաստիարակություն- Աշակերտների շրջանում բարձրացնել աշխատանքի հանդեպ սերը, փորձել ինքնուրույն աշխատանքներ կատարել տանը և դպրոցում՝ աթոռների վերանորոգում, դասասենյակի մաքրում: Կյանքի գլխագիր դարձնել՝ աշխատանքը բարիք է գաղափարը:Զրույցներ տանել ծնողների աշխատանքի դերի մասին:Կազմակերպել ստեղծագործությունների պատրաստում, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների համար խրախուսել աշակերտներին:Անցկացնել մաքրության շաբաթ դասարանում, սահմանել հերթապահություն, խրախուսել առավել մաքրասերներին: Մասնակցել Համադպրոցական, համաքաղաքային շաբաթօրյակներին, բարեկարգել դասարանը, մասնակցել ծառատունկի: Կարևորել մաքրության դերը նաև թաղամասում, բակերում, սեփական օրինակով վերափոխել անգամ մեծահասակներին:

Բնապահպանական դաստիարակություն –Դասարանում աճեցնել բույսեր, ապահովելդրանց խնամքը, մասնակցել ծառատունկի, բակում գարնանը աճեցնել ծաղիկներ: Կազմակերպել զրույցներ բնության պահպանության թեմայով: Այցելել Ստեփանավանի բուսաբանական այգի, ծանոթանալ տարբեր բույսերի կյանքի տևողությանը, նրանց օգտակարությանը:

3 ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Առաջնահերթություն է կապը դպրացի, ուսուցիչնեչի և ծնողների միջև, որի նպատակով էլ մանրամասն ուսումնասիրել աշակերտների ընտանիքները, սերտ համագործակցել ծնողների հետ, պարզել ընտանիքներում տիրող բարոյական մթնոլորտը՝ ապահովելու ուսումնադաստիարակչական բարձր որակները, ձևավորելու մարդկային բարձր հատկանիշներով օժտված անհատներ: Մեծ ուշադրություն դարձնել տանը տեղի ունեցող իրադարձություններին, օգնել երեխաներին՝ չենթարկվելու ընտանեկան բռնությունների: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, ծնողներից ստանալ տեղեկատվություն ընտանեկան պայմանների մասին,իրազեկելծնողներին աշակերտների վարքի, ուսումնառության մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Գիտելիքի օր միջոցառման մասնակցություն	սեպտեմբեր	Դասղեկ,դասարան
II	Մեծանուն հայ աստղագետ Վ.Համբարձումյան-115	սեպտեմբեր	Դպրոց
III	32ամյա անկախ Հայաստան	սեպտեմբեր	Դասարան
IV	Մասնակցություն 2020թ.-ի պատերազմի զոհերի հիշատակի մոմավառությանը	սեպտեմբեր	Դասարան
V	«Դարձիր գրադարանի բարեկամ» գրքերի վերանորոգում	հոկտեմբեր	Դասղեկ-դասարան-գրադարանավար

VI	«Հպարտ եմ, որ հայ եմ>> զրույց	հոկտեմբեր	Դասղեկ, դասարան
VII	«Հեռու մնանք վնասակար սովորություններից» զրույց	հոկտեմբեր	Դասարան-դասղեկ-ֆիզկ. ուսուցիչ
VIII	Շնորհավոր տոնդ, սիրելի ուսուցիչ պաստառի պատրաստում	հոկտեմբեր	Դասարան
IX	« Ո՞վ է իմ ընկերը» զրույց	նոյեմբեր	Դասղեկ
X	Մաքրում ենք մեր շրջապատը	նոյեմբեր	Դասարան-դասղեկ
XI	Իրազեկվում ենք մեր երկրի կյանքին՝ ամսագրեր և թերթեր	նոյեմբեր	Դասղեկ-դասարան
XII	«Հայկական ավանդական տոները» ուսումնասիրում ենք մեր տոները	նոյեմբեր	Դասարան
XIII	«Իմ հերոսը ...» մտքերի փոխանակում	դեկտեմբեր	Դասարան-դասղեկ
XIV	« Երկրաշարժ» ֆիլմի դիտում	դեկտեմբեր	Դասղեկ, դասարան
XV	Նախապատրաստվում ենք Ամանորին:	դեկտեմբեր	Դասարան-դասղեկ
XVI	Ձմեռային խաղեր ձյունածածկ բակում: Մասնակցություն դիմակահանդեսի	դեկտեմբեր	Դասարան
XVII	Ամանորյա ներկայացման դիտում	դեկտեմբեր	Դասղեկ
XVIII	Առաջի կիսամյակի առաջադիմության վերլուծություն	հունվար	Դասարան-դասղեկ
XIX	<<Շնորհավոր տոնդ Հայոց բանակ>> կինոդիտում	հունվար	Դասարան, դասղեկ
XX	« Բոլոր մասնագիտություններն էլ կարևոր են» ուսումնասիրություն	հունվար	Դասղեկ-դասարան
XXI	Հովհ. Թումանյան-155: Կարդում ենք Թումանյանի հեքիաթները	փետրվար	Դասղեկ
XXII	Մայրենի լեզվի օր, մտքեր մայրենիի մասին, պատի թերթի պատրաստում	փետրվար	Դասարան-դասղեկ
XXIII	«Առողջ մարմնում առողջ հոգի» զրույց-քննարկում	փետրվար	Դասարան-դասղեկ
XXIV	Ֆիլմի դիտում՝ Վազգեն Սարգսյան	մարտ	Դասարան
XXV	«Գեղեցիկը կփրկի աշխարհը» մտքերի տարափ, քննարկում	մարտ	Դասարան
XXVI	Համակարգչային խաղերը և դրանց բացասական ազդեցությունը-քննարկում	մարտ	Դասղեկ, դասարան
XXVII	« Եթե ես լինեի...» քննարկում, ինքնավերլուծություն	մարտ	Դասղեկ, դասարան
XXVIII	«Ապրիլյան պատերազմը» ինֆորմացիոն դաս պատերազմի մասին	ապրիլ	Դասարան,ՆԶՊ ուսուցիչ
XXIX	Կիրառում ենք երթևեկության կանոնները մեր կյանքում	ապրիլ	Դասարան
XXX	Սուրբ զատկի խորհուրդը	ապրիլ	Դասղեկ, դասարան
XXXI	« Եղեռնը ոճիր է ու պետք է դատապարտվի»	ապրիլ	Դասարան
XXXII	Աշխատանքի տոն- զրույց աշխատանքի մասին	մայիս	Դասղեկ,դասարան
XXXIII	Հայոց հաղթանակած մայիսը- քննարկումներ, մտքերի փոխանակում, իրազեկում	մայիս	Դասարան-դասղեկ
XXXIV	Ամփոփում ենք ուսումնական տարին: Էքսկուրսիայի կազմակերպում բնության գրկում	մայիս	Դասղեկ,դասարան